

ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

<<Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան>> ծրագրի իրականացման գրասենյակը Բնապահպանության նախարարության անունից հրավիրում է կազմակերպություններին՝ ներկայացնելու առաջարկ ստորև ներկայացված ընդհանուր նկարագրին և տեխնիկական բնութագրին համապատասխանող 10 հատ էներգախնայող վառարանների մատակարարման համար:

Վառարանի ընդհանուր նկարագիր

1. Վառարանը պետք է կազմված լինի այրման խցից, ունենա ջեռոց և մոխիրի կուտակման խուց,
2. Ցանկալի է ունենա մուգ շագանակագույն կամ սև գույն,
3. Ունենա ջերմության կորուստը նվազեցնող օդատարի կարգավորիչ փական,
4. Ունենա ներկառուցված ջեռոց՝ ջերմակայուն ապակե դռնակով և ջերմաչափով,
5. Ունենա այրման համար անհրաժեշտ օդի մուտքի կարգավորիչ՝ դիմացի հատվածից,
6. Ունենա այրման խցի և ջեռոցի դռնակների հարմարավետ բռնակներ,
7. Տաքացման եղանակը՝ բնական կոնվեկցիա,
8. Վառելիքի տեսակը՝ փայտ, բրիկետ:

Վառարանի տեխնիկական բնութագիր

1. Կարկասի թիթեղի հաստությունը՝ առնվազն 2մմ,
2. Վերնամասի թիթեղի հաստությունը՝ առնվազն 3մմ,
3. Քաշը՝ մինչև 70 կգ,
4. Ջերմատվությունը՝ առնվազն 10 kW,
5. Երկարությունը՝ առնվազն 700 մմ,
6. Լայնությունը՝ առնվազն 400 մմ,
7. Բարձրությունը՝ ոտքերի հետ միասին՝ առնվազն 750 մմ,
8. Այրման խուցի չափսերը՝ առնվազն 250մմ x200մմx350մմ(լայնություն/բարձրություն/խորությունը)
9. Ջեռոցի չափսերը՝ առնվազն 320մմx350մմx200մմ(լայնություն/բարձրություն/խորությունը),
10. Տաքացման մոտավոր մակերես՝ առնվազն 45 մ²,
11. Տաքացման մոտավոր ծավալ՝ առնվազն 120 մ³,
12. Էներգաարդյունավետությունը՝ առնվազն 60%,
13. ISO 14001 ստանդարտին համապատասխան,
14. Երաշխիքային ժամկետ՝ առնվազն 2 տարի:

Հետաքրքրված կազմակերպությունները մինչև 2019թ-ի մարտի 15-ը ներառյալ իրենց գնառաջարկները կարող են ներկայացնել ՊՏԱԾ-Հ ծրագրի իրականացման Երևանի գրասենյակ՝ հասցե Կառավարության 3-րդ շենք, 5-րդ հարկ, 544 սենյակ կամ ուղարկել հետևյալ էլ-փոստի հասցեներին m.babayan@consecoard.am և m.nalbandyan@consecoard.am:

Լրացուցիչ հարցերի կամ պարզաբանումների անհրաժեշտության դեպքում ևս կարող եք գրել վերը նշված էլ-փոստի հասցեներին: